



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
- ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
- ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մտադրում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

նաև այս կամ այն երկրի տնտեսության վրա: Հոդվածում ներկայացվում են ֆինանսական հատվածի կողմից ներքին վարկավորման դինամիկան (ՀՆԱ-ի նկատմամբ՝ տոկոսներով) և չսպասարկվող վարկերի ծավալն ընդհանուր վարկերում՝ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԱՊՀ որոշ երկրներում:

NARINE AVANESYAN

NON-SERVEED LOANS OF BANKS, AS THE RISK INFLUENCING THE STABILITY OF THE FINANCIAL SYSTEM

Key words: *the financial stability, commercial banks, non-working loans, NPL, credit assets, classification of assets*

For the assesment of the financial stability of RA, it is important to identify and assess the risks associated with the activities of banks. The existence of large amounts of non-working loans affect the financial stability and at the same time it effects the economy of a particular country. The article presents the dynamics of domestic lending by the financial sector (% of GDP) and non-performing loans in total loans, both in Armenia and in some CIS countries.

ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Դասախոս, ՀՊՏՀ ԳՄ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. *առևտրային բանկ, բանկային պրոդուկտ, բանկային ծառայություն, վարկային գործառնություններ, վարկային ռիսկ, վարկային պորտֆել, վարկունակություն*

Հոդվածի նպատակն է բացահայտել վարկային ռիսկի դերը բանկային ռիսկերի համակարգում, ինչպես նաև իրականացնել այն պայմանավորող գործոնների վերլուծություն: Այդ նպատակով ներկայացվել է վարկային ռիսկի կարևորությունն առևտրային բանկերի կայուն գործունեության ապահովման մեջ, առանձնացվել են դրա վրա ազդող հիմնական գործոնները, կատարվել է վերջիններիս դասակարգում: Բնութագրվել են բանկային պրոդուկտը (արդյունքը), ծառայությունն ու գործառնությունը և պրոդուկտի հետ կապված գործոնները, ինչը թույլ է տվել առավել համակողմանի և ամբողջական դարձնել վարկային ռիսկի վրա ազդող գործոնների վերլուծությունը:

Ամբողջ աշխարհում բանկային գործունեությունը տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկն է: Որպես բարձր տեխնոլոգիական ոլորտ՝ այն բավական զգայուն է ինչպես մակրո-, այնպես էլ միկրոմակարդակում տեղի ունեցող փոփոխությունների նկատ-


մամբ: Ինչպես ցույց է տալիս փորձը, այդ փոփոխությունները կապված են առևտրային բանկերի և շուկաների միջազգայնացման, մրցակցության ուժեղացման, նոր բանկային պրոդուկտների և ծառայությունների առաջացման, բանկային օրենսդրության և ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաների կատարելագործման հետ:

Առևտրային բանկերը տնտեսության «արյունատար համակարգն» են, ուստի այդ պատճառով էլ շատ կարևոր է, որ այն գործի անխափան, կայուն և արդյունավետ: Բանկային հասմակարգի կայուն զարգացումից է մեծապես կախված նաև ձեռնարկությունների և կազմակերպությունների հաջող տնտեսական գործունեությունը, քաղաքացիների վստահությունն իրենց խնայողությունների անվտանգության ապահովման հարցում:

Առանձնացվում են բանկային ռիսկերի տարբեր տեսակներ՝ վարկային, տոկոսադրույքի, իրացվելիության, գործառնական, եկամտաբերության կորստի և այլն, որոնցից յուրաքանչյուրն էական ազդեցություն ունի բանկի ամբողջական ռիսկի ձևավորման վրա: Սակայն, մեր կարծիքով, վարկային ռիսկը բանկային սպառնալիքների առավել էական բաղադրիչ է, քանի որ, ինչպես վկայում է համաշխարհային փորձը, բանկերի սնանկացման հիմնական պատճառներից են վարկառուների կողմից վարկերը չվերադարձնելը և ռիսկերի հետ կապված բանկի չմտածված քաղաքականությունը:

Առևտրային բանկերի վարկային գործառնությունները նրանց գործունեության առավել եկամտաբեր ուղղություններից են, սակայն, միաժամանակ, նաև առավել ռիսկային, ուստի վարկային ռիսկը եղել և մնում է բանկային ռիսկերի հիմնական տեսակ:

«Ը բանկային համակարգի համար ևս վարկայինը կարևորագույն ռիսկերից մեկն է, ինչի մասին վկայում են հետևյալ ցուցանիշները (գծ. 1)»¹.



Գծապատկեր 1. Առևտրային բանկերի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող՝ ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը

¹ www.cba.am, «ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, 2016:

Ինչպես երևում է գծապատկերից, առևտրային բանկերի ռիսկով կշռված ակտիվներում վարկային ռիսկը բավական մեծ տեսակարար կշիռ ունի, և 2016 թ. այն կազմել է 86.8%՝ նախորդ տարվա 89.1%-ի փոխարեն: ՀՀ առևտրային բանկերը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն ռիսկի այս տեսակին, քանի որ դրա արդյունավետ կառավարումը նրանց կենսունակության և մրցունակության գրավականն է:

Վարկային ռիսկը ներկայացնում է բանկի նկատմամբ մյուս կողմի՝ իր պարտավորությունները չկատարելու ռիսկ¹: Այսինքն՝ վարկային ռիսկ ասելով հասկանում ենք մինչև մարման ժամկետն անբարենպաստ իրադարձությունների ի հայտ գալու հետևանքով վարկի մայր գումարը և տոկոսագումարները չմարելու հավանականություն: Վերջինիս առաջացման վտանգն առկա է վարկային և դրան հավասարեցված այլ հաշվեկշռային ու արտահաշվեկշռային գործառնությունների իրականացման ժամանակ:

Վարկային ռիսկի վրա ազդում են հետևյալ գործոնները.

1. երկրի և տարածաշրջանի տնտեսական և քաղաքական իրավիճակը, այսինքն՝ միկրո- և մակրոտնտեսական գործոնները՝ անցումային տնտեսության ճգնաժամային վիճակ, բանկային համակարգի ձևավորման անավարտություն և այլն,
2. գործունեության առանձին ճյուղերում այն վարկերի կենտրոնացումը, որոնք զգայուն են տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, ինչպես, օրինակ, վարկառուների նեղ շրջանակի կամ տնտեսության ոլորտի մեծ ծավալով վարկավորումը,
3. վարկառուների վարկունակությունը, վարկանիշը և տեսակը՝ ըստ սեփականության ձևի, պատկանելության, այլ ձեռնարկությունների ու վարկատուների հետ նրանց փոխհարաբերությունները,
4. վարկառուների սնանկացումը,
5. ֆինանսական դժվարություններ ունեցող հաճախորդներին տրամադրված վարկերի և այլ բանկային պայմանագրերի մեծ տեսակարար կշիռը,
6. քիչ ուսումնասիրված, նոր կամ ոչ ավանդական ոլորտներում բանկային վարկավորման կենտրոնացումը,
7. նոր ներգրավված հաճախորդների տեսակարար կշիռը, որոնց վերաբերյալ բանկը չունի բավարար տեղեկատվություն,
8. վարկառուների կողմից իրականացվող չարաշահումներն ու խարդախությունները,
9. տրամադրվող վարկերի համար որպես գրավ դժվար իրացվելի կամ արագ արժեզրկվող արժեքների ընդունումը, կամ համապատասխան գրավի բացակայությունը կամ դրա կորուստը,
10. վարկային պորտֆելի բազմազանեցումը,
11. վարկային գործարքի կամ առևտրային ու ներդրումային ծրագրերի տեխնիկատնտեսական հիմնավորման ճշտությունը,

¹ Риск-менеджмент в коммерческом банке: монография/ коллектив авторов: под ред. И. В. Ларионовой. М., «КНОРУС», 2014, с. 150.

12. բանկի կողմից վարկավորման և վարկային պորտֆելի ձևավորման քաղաքականության հաճախակի փոփոխությունները,

13. տրամադրվող վարկի և դրա ապահովվածության ձևը, տեսակը և մեծությունը,

14. վարկավորման մշակույթի մակարդակը:

Այս գործոններից կարևոր նշանակություն ունի հատկապես վարկավորման մշակույթի վատթարացումը, որի հատկանիշներն են.

1. մասնավոր շահերի առկայությունը, երբ վարկերի տրամադրումը կատարվում է սահմանված վարկավորման սահմանաչափերից և ստանդարտներից դուրս՝ շահագրգիռ կողմերի ճնշման տակ,
2. վարկավորման սկզբունքները չպահպանելը,
3. շահույթի ստացման գաղափարով չափից ավելի տարվելը, երբ այս ցանկությունը գերազանցում է խելամտությունը,
4. վարկային տեղեկատվության թերի լինելը,
5. ուշադրության կորուստը, ինչպես նաև մեծ վստահությունը մշտական և լավ ծանոթ վարկառուների նկատմամբ, ինչի հետևանքով բանկերը հիմնվում են բանավոր տեղեկատվության, այլ ոչ թե իրական ֆինանսական ցուցանիշների վրա,
6. վերահսկողության պակասը, ինչի հետևանքով վարկի գործողության ժամկետում բանկը հաճախորդի գործողությունների վերաբերյալ թերի տեղեկատվություն է ունենում, և ի սկզբանե հուսալի համարվող վարկերը կարող են խնդիրներ առաջացնել և վնասների պատճառ դառնալ,
7. աշխատակիցների անբավարար մասնագիտական մակարդակը, որը հնարավորություն չի տալիս վերլուծելու ֆինանսական հաշվետվությունները և ստանալու ու գնահատելու այլ անհրաժեշտ տեղեկատվությունը,
8. ռիսկերի գնահատման սխալ մոտեցումը:

Վարկային ռիսկի վրա ազդող գործոնները կարելի է դասակարգել ըստ հետևյալ խմբերի¹.

1. արտաքին գործոններ,
2. վարկատու բանկի հետ կապված գործոններ,
3. վարկառուի հետ կապված գործոններ:

Արտաքին գործոններին են վերաբերում տնտեսության վիճակը և զարգացման հեռանկարները, դրամավարկային, արտաքին և ներքին պետական քաղաքականությունները և պետական կարգավորման արդյունքում դրանց հնարավոր փոփոխությունները:

Ներքին գործոնները կարող են կապված լինել ինչպես վարկատու բանկի, այնպես էլ վարկառուի հետ: Առաջին խմբի մեջ մտնում են վարկատու բանկի բոլոր մակարդակներում կառավարման որակը, շուկայական ռազմավարության տեսակը, նոր վարկային պրոդուկտների մշակման, շուկա դուրսբերման և առաջխաղացման ունակությունները,

¹ Բ. Ասատրյան, Բանկային գործ, երկրորդ վերամշակված և համալրված հրատարակություն: Եր., «Գիր» հրատ., 2013, էջ 376:

ընտրված վարկային քաղաքականությունը, վարկային պորտֆելի կառուցվածքը, ռիսկի ժամանակային գործոնները և այլն:

Վարկառուի գործունեության հետ կապված գործոններին են վերաբերում վարկառուի առևտրային գործունեության բովանդակությունն ու պայմանները, վարկունակությունը, կառավարման մակարդակը, վարկանիշը, վարկավորման օբյեկտին առնչվող ռիսկի գործոնները:

Գործնականում այս գործոնները կարող են ազդել ինչպես հակառակ ուղղություններով, երբ դրական ազդեցությունը չեզոքացնում է բացասականը, այնպես էլ միևնույն ուղղությամբ, երբ մի գործոնի բացասական ազդեցությունը մեծանում է մեկ այլ գործոնի ազդեցությամբ:

Վարկային ռիսկի գործոնները հիմք են հանդիսանում դրանց դասակարգման համար¹.

1. ըստ ազդեցության ոլորտի՝ ներքին և արտաքին վարկային ռիսկեր,
2. ըստ բանկի գործունեության հետ փոխկապվածության աստիճանի՝ բանկի գործունեությունից կախված և անկախ:

Բանկի գործունեությունից կախված վարկային ռիսկերը, այդ գործունեության ծավալից ելնելով, բաժանվում են ֆունդամենտալ (հիմնական), առևտրային, անհատական և ամբողջական ռիսկերի²:

Ֆունդամենտալ վարկային ռիսկը կապված է ակտիվների և պասիվների կառավարմամբ զբաղվող մենեջերների կողմից որոշումների ընդունման հետ: Դրանց են վերաբերում գրավի ծածկման ստանդարտների հետ կապված ռիսկերը, բանկի ստանդարտներին չհամապատասխանող վարկառուների վարկավորման վերաբերյալ որոշումների ընդունման հետ կապված ռիսկերը և այլն:

Առևտրային ռիսկերը կապված են փոքր բիզնեսի, իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող խոշոր և միջին հաճախորդների գծով բանկի վարկային քաղաքականության, վերջինիս առանձին ուղղությունների հետ:

Անհատական վարկային ռիսկերը ներառում են բանկային պրոդուկտի, ծառայության, գործառնության և վարկառուի ռիսկերը:

Բանկային պրոդուկտը արդյունք է, որը ստեղծվում է բանկի կողմից հաճախորդների և պայմանադիր կողմերի սպասարկման գործընթացում և առաջարկվում ֆինանսական շուկայի տարբեր հատվածներում, այսինքն՝ ներկայացնում է բանկային փոխկապակցված ծառայությունների և գործառնությունների համակարգ՝ ուղղված բանկային գործունեության առանձին տեսակների գծով հաճախորդների պահանջունքների բավարարմանը:

¹ Риск-менеджмент в коммерческом банке: монография/ коллектив авторов: под ред. И. В. Ларионовой. М., “КНОРУС”, 2014.

² Банковские риски: учебное пособие/ кол. авторов: под ред. д.-ра экон. наук, проф. О.И. Лаврушина и д.-ра экон. наук, проф. Н.И. Валенцевой.-М.: КНОРУС, 2007, с. 33.

Բանկային ծառայությունը բանկային պրոդուկտի տարատեսակ է, որն արտահայտվում է բանկի գործողություններում՝ ուղղված հաճախորդների դրամական բնույթի որոշակի պահանջմունքների բավարարմանը:

Բանկային գործառնությունը բանկի գործողությունների տեխնիկական, հաշվապահական, ֆինանսական և այլ հնարքներն ու եղանակներն են, որոնց ամբողջությունն ու որոշակի համադրությունն արտահայտվում է բանկային ծառայության ստեղծման տեխնոլոգիայում:

Բանկային պրոդուկտի նշված մեկնաբանումից կարելի է առանձնացնել դրա հետ կապված վարկային ռիսկի հետևյալ գործոնները.

1. վարկային պրոդուկտի համապատասխանությունը վարկառուի պահանջմունքներին՝ հատկապես ըստ ժամկետների և գումարի,
2. գործարար ռիսկը, որը բխում է վարկավորվող ծրագրի բովանդակությունից,
3. մարման աղբյուրների հուսալիությունը,
4. ապահովվածության բավարար մակարդակն ու որակը:

Վարկային ռիսկի գործոնները կարող են բխել նաև գործառնական ռիսկից, քանի որ պրոդուկտի և ծառայության ստեղծման գործընթացում կարող են թույլ տրվել տեխնոլոգիական և հաշվապահական սխալներ, ինչպես նաև չարաշահումներ:

Ամբողջական կամ համախառն վարկային ռիսկը բանկի վարկային պորտֆելի ռիսկն է:

Վարկի տեսակը ևս թույլ է տալիս վարկային ռիսկերը դասակարգել որպես օվերդրաֆտի, վակային գծի և վարկավորման այլ տեսակների գծով ռիսկեր: Յուրաքանչյուր վարկատեսակ ուղեկցվում է տարբեր տեսակի ռիսկերով և դրանք առաջացնող գործոններով, ինչը պահանջում է վարկային ռիսկերի կառավարման մեթոդաբանական ապահովվածության մշակում և կառավարման տարբեր մեթոդների կիրառում:

Այսպիսով՝ վարկային ռիսկի վրա ազդում են բազմաթիվ գործոններ, և առևտրային բանկերը պետք է գնահատեն դրանցից յուրաքանչյուրը, ինչպես նաև դրանց փոփոխությունները հեռանկարում, ինչը հնարավորություն կտա նրանց լուծելու բանկային կարևորագույն ռիսկի՝ վարկային ռիսկի նվազեցման խնդիրը:

ЛИЛИТ АВETИCЯH

АНАЛИЗ ФАКТОРОВ, ВЛИЯЮЩИХ НА КРЕДИТНЫЙ РИСК КОММЕРЧЕСКИХ БАНКОВ

Ключевые слова: *коммерческий банк, банковский продукт, банковская услуга, кредитные операции, кредитный риск, кредитный портфель, кредитоспособность*

Целью статьи является выявление роли кредитного риска в системе банковских рисков, а также анализ факторов кредитного риска. Для достижения поставленной цели в статье представлена роль кредитного риска для обеспечения стабильной работы коммерческих бан-

ков, были выделены основные факторы, влияющие на него, а также проведена их классификация. В статье описываются определения банковских продуктов, услуг и операций и факторы, связанные с продуктом, что позволило сделать анализ факторов кредитного риска более полным и всесторонним.

LILIT AVETISYAN

ANALYSIS OF FACTORS AFFECTING THE CREDIT RISK OF COMMERCIAL BANKS

Key words: commercial bank, banking product, banking service, credit operations, credit risk, credit portfolio, creditworthiness

The purpose of this paper is to identify the role of credit risk among risks existing in the banking system, as well as to analyze the sources. For this purpose, credit risk has been particularly highlighted as an ensurer of stable operations of commercial banks, the main sources have been identified and classified. The paper provides definitions of banking product, service, operation and product-related factors, leading to a more complete and comprehensive analysis of credit risk sources.

ՀԱՅԿԱԶ ԱՐԱՄՅԱՆ

ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի ասպիրանտ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՎՐԱ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. արժեթղթերի շուկա, բաժնետոմսեր, կորպորատիվ պարտատոմսեր, պետական պարտատոմսեր, դրամավարկային քաղաքականություն, ազդեցության անուղղակի գործիքներ

ՀՀ արժեթղթերի շուկայի վրա ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության հետևանքները բացահայտելու նպատակով իրականացվել է ռեզրեսիոն վերլուծություն: Հոդվածում հետազոտվել են ՀՀ ԿԲ-ի կողմից կիրառվող դրամարկային քաղաքականության գործիքները, ռեզրեսիոն մոդելի միջոցով գնահատվել դրամավարկային քաղաքականության ցուցանիշների ազդեցությունը ՀՀ արժեթղթերի շուկայի տարբեր հատվածների՝ բաժնետոմսերի, կորպորատիվ ու պետական պարտատոմսերի շուկաների վրա, ինչպես նաև կատարվել համապատասխան եզրահանգումներ:

Արժեթղթերի շուկայի վրա դրամավարկային քաղաքականության ազդեցության (այսուհետև՝ ԴՔԱ) վերաբերյալ աշխարհում կատարվել են բազմաթիվ հետազոտություններ, սակայն տնտեսագետները միասնական կարծիք չունեն այդ ազդեցության ուղղու-